սկսել էր պատրաստել: Դա, որպէս երեւում էր, մեր հիւրընկալի դուստրն էր. բայց ո՞ւր էր նրա մայրը: Այդ կողմի շինական կանայք սովորութիւն չունէին՝ քաղաքացոց նման ծածկոել տղամարդերից, այլ երեւում էին եւ մինչեւ անգամ խօսում էին օտարների հետ: Գիւղացոց մէջ մնացել էր այդ պարզութիւնը: Բայց ինչո՞ւ չէր երեւում մեր տանտիկինը: Այդ մասին հիւրերից ոչ ոք չհարցրեց եւ ոչ ինքը, տան տէրը, մի բան ասաց: Սեղանը գիւղական պարզ սեղանից աւելի համադամ եւ ճոխ էր, տարակոյս չկար, որ վարպետ Փանոսը այդ մասին նախապէս առանձին հոգ էր տարել:

Ճաշից յետոյ անմիջապէս գնացինք ծովեզրը: Այնտեղ Ասլանը ցանկանում էր տեսնել, թէ ինչպէս են պատրաստում ծովային աղերը: Պատրաստելու եղանակը շատ պարզ էր. ափերի մօտ փորած էին փոքրիկ ածուներ, ջուրը ծովից բաց էին թողնում ածուների մէջ, այնչափով, որ բոլորովին լցւում էին, յետոյ թողնում էին նրանց այնքան ժամանակ, մինչեւ արեւի ջերմութեան ներքոյ ջուրը բոլորովին գոլորշիանում էր, իսկ յատակի վրայ մնում էին աղի փայլուն բիւրեղները: Այդ բոլորը տեսաւ Ասլանը եւ իր հետ վեր առեց պատրաստած աղերից: Գիւղացիները, որ այդ գործով էին զբաղոած, հետաքրքրութեամբ հարցնում էին, թէ ի՞նչ պէտք է անէ: Նա բացատրեց, թէ այդ աղերը, որ դուք միայն օճառ պատրաստելու համար էք գործածում, ուրիշ շատ բաների մէջ կարող էին գործածոել եւ մեծ օգուտներ բերել: Նրանք զարմացան եւ ուրախացան: Ես իսկոյն նկատեցի, թէ ինչպէս այդ բարի մարդիկը սկսեցին դրանից յետոյ մի առանձին յարգանքով վերաբերոել դէպի Ասլանը: Երբ գյղացուն մի բան ես սովորեցնում, որի մէջ տեսնում է իր շահը, նա այնուհետեւ դառնում է քո ամենալաւ բարեկամը:

Յետոյ գնացինք նաւահանգիստը: Ոչ մի առագաստաւոր նաւ չկար այնտեղ, բոլորը նաւակներ էին, թէ հին եւ թէ նոր տեսակներից: Հները, որոնց թիւը աւելի շատ էր եւ որոնց տեղացիք կոչում էին լաստ կամ սանդալ, դեռ կրում էին այն նախնական ձեւը, երբ մարդ առաջին անգամ սկսեց ճանապարհորդել ջրի վրայ: Մի քանի գերաններ, հաւասար երկարութեամբ եւ հաւասար հաստութեամբ, կցել էին միմեանց հետ, այնպէս որ բոլորը միասին քառակուսի ձեւ էին ստացել: Այդ քառակուսի մակերեւոյթը պատել էին տախտակամածով, իսկ եզերքը՝ մի կանգունաչափ վանդակապատով: Քառակուսիի տակից, չորս անկիւններում, կապած էին չորս եզան կամ գոմէշի տիկեր, փչած՝ օդով լիքը: Նայելով նրանց վրայ, Ասլանը ժպտալով ասաց.